են ամենքն էլ պատերազմի գնալ երկրի պաշտպանութեան համար։

Ժողովրդական կեանքի հետ ծանօթանալու համար ես մի քանի տուն հիւր գնացի. իմ շուրջը ժողովում էին քաղաքի նշանաւոր անձինք. քահանան, Թադէի վանքի վանահայրը, որ նոյն միջոցին պտղի հաւաքելու համար էր եկել, ազգային վիճակից տեղեկութիւններ լսելու։ Սաստիկ հետաքրքրվում էին Ռուսաստանի նշանաւոր հայերովը։ Ռուսաց բանակի երեւելի հայ զօրապետների անունները անգիր գիտէին։ Նոքա հրացան ուսին իւրեանց բարձունքներից ականատես էին եղել ռուս-տաճկական պատերազմի եզրակացութեանը։ Նրանք ամեն օգնութիւն տված էին Բայազիդի հայոց կոտորածից ազատուածներին։

61-երրորդ յօդուածի շառաչիւնը նրանց ականջին ևս հասել էր։ Նրանք լաւ ծանօթ էին Ներսէս, Խրիմեան անունների հետ, բայց զարմանալին այն էր, որ ինչպէս Լուսինեան արքեպիսկոպոսի արքայական շողշողուն անունը Մասիսից այն կողմը չէր անցել։ Ինձ համար էլ կարծում էին, որ ես Ռուսաստանի հայոց գործակատարն եմ, հատկապէս ուղարկուած նրանց վիճակը քննելու և դարմանելու։ Ես չը կարողացայ նրանց կարծիքը ստել, չը հաստատել։

«Խօսք կը տա՞ք ինձի», հարցրի ես, «որ եթէ